ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 04.10.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-48/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.01.2015թ. թիվ 1/73-1/759203-15, 04.12.2015թ. թիվ 1/73-1/38341-15, 13.01.2016թ. թիվ 1/73-1/373-16, 19.02.2016թ. թիվ 1/73-3/6054-16, 19.02.2016թ. թիվ 1/73-1/6022-16, 04.03.2016թ. թիվ 1/73-3/8391-16, 09.03.2016թ. թիվ 1/73-3/8588-16, 19.04.2016թ. թիվ 1/73-3/12359-16, 16.05.2016թ. թիվ 1/73-3/14195-16, 26.05.2016թ. թիվ 1/73-1/15069-16, 02.06.2016թ. թիվ 1/73-1/15617-16 գրություններով ներկայացված «Էդուարդ Առուստամյան Ավետիսի» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից, Ա/Ձ Էդուարդ Առուստամյան) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-48/16 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-48/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 30.09.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը 30.01.2015թ. թիվ 1/73-1/759203-15, 04.12.2015թ. թիվ 1/73-1/38341-15, 13.01.2016թ. թիվ 1/73-1/373-16, 19.02.2016թ. թիվ 1/73-3/6054-16, 19.02.2016թ. թիվ 1/73-1/6022-16, 04.03.2016թ. թիվ 1/73-3/8391-16, 09.03.2016թ. թիվ 1/73-3/8588-16, 19.04.2016թ. թիվ 1/73-3/12359-16, 16.05.2016թ. թիվ 1/73-3/14195-16, 26.05.2016թ. թիվ 1/73-1/15069-16, 02.06.2016թ. թիվ 1/73-1/15617-16 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ առաջարկելով ուսումնասիրել Ա/Ձ Էդուարդ Առուստամյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերջինիս Ցուցակում ներառելու համար:

2. **<u>Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը, կարծիք ստանալու նպատակով 05.02.2015թ. թիվ 09/032-180, 07.12.2015թ. թիվ 01/04.1/3637-15, 21.01.2016թ. թիվ 01/04.1/109-16, 22.02.2016թ. թիվ 01/04.1/589-16, 24.02.2016թ. թիվ 01/04.1/647-16, 15.03.2016թ. թիվ 01/04.1/965-16, 11.03.2016թ. թիվ 01/04.1/877-16, 20.04.2016թ. թիվ 01/04.1/1584-16, 17.05.2016թ. թիվ 01/04.1/1904-16, 01.06.2016թ. թիվ 01/04.1/2119-16, 13.06.2016թ. թիվ 01/04.1/2261-16 գրություններով դիմել է Ա/Ձ Էդուարդ Առուստամյանին:

Ի պատասխան Կենտրոնի 05.02.2015թ. թիվ 09/032-180 գրությամբ հայտնել է, որ մասնակցելով «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի կողմից 27.11.2014թ. կազմակերպած սննդամթերքի ձեռքբերման ընթացակարգին, Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում տեղ են գտել անհամապատասխանություններ, այն է՝ Մասնակցի կողմից առաջարկված գներն չափից ավելի ցածր էին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Մասնակցին ճանաչել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Միևնույն ժամանակ, Մասնակիցը ընթացակարգի գնահատող

հանձնաժողովին խնդրել է, որպեսզի վերանայվի Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը, որպիսի խնդրանքը, սակայն, ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից մերժվել է:

Մասնակիցը վերոհիշյալ գրությամբ խնդրել է հաշվի առնել վերը նշվածը և այն հանգամանքը, որ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը տվյալ պահին կատարում է մատակարարում Երևան քաղաքի բոլոր մանկապարտեզներում և բացի շնորհակալությունից ոչ մի այլ արձագանք չի ստացել:

Ի պատասխան Կենտրոնի 21.01.2016թ. թիվ 01/04.1/109-16 գրության՝ Մասնակիցը 05.02.2016թ. գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՖՆ մասնագիտացված շնաբուծական կենտրոնի կարիքների համար սննդամթերքի ձեռբերման նպատակով 05.02.2015թ. հայտարարված «ՀՀ ՖՆ ՇՀԱՊՁԲ-15/2-20/15» ծածկագրով ընթացակարգին Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը 14.10.2015թ. հայտ է ներկայացրել և այդ օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ որևէ հարկային պարտավորություն չի ունեցել: Սակայն 15.10.2016թ. կատարվել է 2014թ. 4-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվետվության ճշտում, որի արդյունքում առաջացել է շրջանառության հարկի գծով պարտավորություն և այն վերահաշվարկվելով անդրադարձել է ընթացակարգի հայտի ներկայացման օրվա վրա՝ առաջացնելով պարտավորություն այդ օրվա դրությամբ: Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի կողմից այդ պարտավորությունները անմիջապես մարվել են:

Կենտրոնը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին ուղղված 06.09.2016թ. թիվ 01/04.1/3351-16 գրությամբ տեղեկացրել է, որ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը Կենտրոնին հայտնել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն, քանի որ 15.10.2015թ. կատարվել է 2014թ. 4-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվետվության ճշտում, որի արդյունքում առաջացել է շրջանառության հարկի գծով պարտավորություն և այն հետհաշվարկով անդրադարձել է մրցույթի հայտի ներկայացման օրվա վրա՝ առաջացնելով պարտավորություն այդ օրվա դրությամբ: Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի կողմից այդ պարտավորությունները անմիջապես մարվել են:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը խնդրել է հայտնել՝ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի ***13.10.2015թ. դրությամբ*** (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ ըստ

Պատվիրատու 1-ի ներկայացրած փաստաթղթերի) ունեցած 515 506 ՀՀ դրամ գումարի չափով հարկային պարտավորությունը ե՞րբ է առաջացել և ի՞նչի արդյունքում:

Ի պատասխան Կենտրոնի 06.09.2016թ. թիվ 01/04.1/3351-16 գրության՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 15.09.2016թ. 1/6-1/27619-16 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի (ՀՎՀՀ 25358462) 13.10.2015թ. դրությամբ 515,506 դրամ չափով հարկային պարտավորությունը առաջացել է 15.10.2015թ-ին՝ էլեկտրոնային եղանակով Նոր Նորքի ՀՏ ներկայացված շրջանառության հարկի 2014թ-ի IV եռամսյակի ճշգրտված հաշվարկից:

Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը, պատշաճ ծանուցված լինելով 28.06.2016թ. ժամը 16:30-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-48/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է, որ առկա չեն Մասնակցին Ցուցակում ներառելու որևէ հիմք, սակայն վերոհիշյալ դիրքորոշումը հիմնավորող որևէ ապացույց չի ներկայացրել:

3. <u>«Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու 1) ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

«Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ը 26.01.2016թ. թիվ 0-23 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով 27.11.2014թ. կազմակերպած «ԳԱԿ-ՄԻԱՄ-ՇՀԱՊՁԲ-11/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 1) հաղթող ճանաչված մասնակիցներին ծանուցվել է գնահատող հանձնաժողովի պայմանագիր կնքելու որոշման մասին:

Հիմք ընդունելով Օրենքի 32-րդ հոդվածի 11-ին մասի պահանջները, Պատվիրատու 1-ը ընտրված մասնակիցների հետ համապատասխան գնման պայմանագիր պետք է կնքեր հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից 5 օրացույցային օրվա ընթացքում՝ պայմանագրի ապահովում ներկայացնելուց հետո:

Վերը նշված ժամկետում ընտրված մասնակիցների հետ կնքվել են համապատասխան պայմանագրեր, բացառությամբ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի, քանի որ վերջինիս լիազորված անձ Հասմիկ Հարությունյանը 12.12.2014թ. ներկայացրել է միայն իրենց կողմից ստորագրված պայմանագրի օրինակները, սակայն հրաժարվել է ներկայացնել պայմանագրի ապահովում, հետևաբար և հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 12.06.2015թ. թիվ 01/04.1/1328-15 գրությամբ հայտնել է, որ Մասնակիցը Ընթացակարգի 2-րդ, 4-րդ, 9-րդ, 19-րդ, 27-րդ, 32-րդ, 40-րդ, 44-րդ, 51-րդ, 65-րդ և 72-րդ չափաբաժինների մասով 01.12.2014թ. ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովը 05.12.2014թ. ծանուցել է Ա/Ձ Էդուարդ Առուստամյանին՝ ներկայացնելով պայմանագիր կքնելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից 12.12.2014թ. ներկայացվել է ստորագրված և կնքված պայմանագրերը՝ առանց Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պայմանագրի ապահովման՝ տուժանքի մասին համաձայնագրի, ինչն արձանագրվել է նաև Պատվիրատուի գնումների համակարգողի՝ Պատվիրատու 1-ի տնօրենին ուղղված 15.01.2015թ. զեկուցագրով:

Կենտրոնի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված վերոհիշյալ գրությամբ արձանագրվել է Ընթացակարգ 1-ի շրջանակներում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «գ» ենթակետի խախտում:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվել է մեկ անգամ, Կենտրոնը գտել է, որ առկա չեն Մասնակցին Ցուցակում ներառելու հիմքերը:

4. <u>ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու 2) ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը 29.01.2016թ. թիվ 1/18-2/2815-16 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՖՆ ՇՀԱՊՁԲ 15/2-20/15» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ

նաև՝ Ընթացակարգ 2) հայտ ներկայացրած մասնակիցներից Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը հայտ ներկայացնելու օրվա դրությամբ՝ 13.10.2015թ. ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 515 506 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն:

Պատվիրատու 2-ը, պատշաճ ծանուցված լինելով Կենտրոնում 28.06.2016թ. ժամը 16:30-ին տեղի ունեցած ՍՑ-ԳԲԽ-48/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

5. Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու 3) ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը:

5.1. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/3» ծածկագրով գնման ընթացակարգ

Երևանի քաղաքապետարանը 17.11.2015թ. թիվ 01/61-23983 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/3» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 3) գնահատող հանձնաժողովի 06.11.2015թ. թիվ 4 որոշմամբ 10-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 23-րդ, 94-րդ, 99-րդ, 100-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը:

Պատվիրատու 3-ը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2015թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված կարգով, առաջարկել է Մասնակցին սահմանված ժամկետում ներկայացնել պահանջվող փաստաթղթերը, սակայն վերջինիս կողմից փաստաթղթերը չեն ներկայացվել և Ընթացակարգ 3-ի գնահատող հանձնաժողովի 12.11.2015թ. թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգին՝ Մասնակցի հետագա մասնակցությունը դադարեցվել է:

5.2. *Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/7-277» ծածկագրով գնման ընթացակարգ*

Երևանի քաղաքապետարանը 04.04.2016թ. թիվ 01/61-5916 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատու 2-ի և Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի միջև 17.12.2015թ. կնքված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/7-277» ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է Գնորդի կողմից համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում (հավելված թիվ 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատակարարել պայմանագրի թիվ 1հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված սննդամթերքը (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին (Ստացողին) պայմանագրի թիվ 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

Երևան քաղաքի «Հ. 125 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից 23.02.2016թ. և 26.02.2016թ. Մասնակցին էլեկտրոնային եղանակով (Մասնակցի կողմից գրությամբ հաստատված պաշտոնական էլ. փոստի հասցեին) պատվիրել է գնման առարկա հանդիսացող «կանաչի» տեսակի սննդամթերք, սակայն այն չի մատակարարվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. Այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանգրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվել է Մասնակցի հետ կնքված սննդամթերքի մատակարարման գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ առաջարկել է Մասնակցին սեղմ ժամկետներում վճարել պայմանագրի 7.2 կետով հաշվարկված տույժը՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 տոկոսի չափով:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը՝ Երևանի քաղաքապետարանը առաջարկել է Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի նկատմամբ կիրառել ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 122-րդ կետով սահմանված դրույթները:

5.3. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/101» ծածկագրով գնման ընթացակարգ

Երևանի քաղաքապետարանը 18.05.2016թ. թիվ 01/61-9635 գրությամբ հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապե-

տարանի կողմից «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/101» ծածկագրով կազմակերպված ընթացակարգի շրջանակներում Կարգի 47-րդ կետի 1-ին մասի դրույթների համաձայն՝ 11.05.2016թ. ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացվել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 13.05.2016թ. տրամադրել է հարցման մասին եզրակացություն՝ համաձայն որի Ս/Ձ Էդուարդ Առուստամյանի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմում է 4 590 000 ՀՀ դրամ, իսկ վերջինիս ներկայացրած գնային առաջարկը 78 435 162 ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Մասնակիցը խախտել է Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության դրույթը՝ ղեկավարվելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի և Կարգի 122-րդ կետի դրույթներով, Պատվիրատու 3-ը խնդրել է նախաձեռնել համապատասխան գործընթաց՝ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

5.4. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» ծածկագրով գնման ընթացակարգ

Երևանի քաղաքապետարանը 26.05.2016թ. թիվ 01/61-10423 գրությամբ հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.05.2016թ. թիվ 4 որոշմամբ 15-րդ, 17-րդ, 29-րդ, 49-րդ, 53-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը:

Պատվիրատու 3-ը, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով, առաջարկել է Ընկերությանը սահմանված ժամկետներում ներկայացնել պահանջվող փաստաթղթերը: Վերջինս 18.05.2016թ. գնման ընթացակարգի համակարգողի էլ. փոստին ներկայացրել է պահանջվող փաստաթղթերի մի մասը, որոնք սկանավորված են եղել ոչ ընթեռնելի տարբերակով:

Համակարգողը նույն օրը Մասնակցին տեղեկացրել է, որ անհրաժեշտ է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել փաստաթղթերի ընթեռնելի տարբերակը:

Մասնակցի կողից 19.05.2016թ. ներկայացված փաստաթղթերը ամբողջական չեն և անթընթեռնելի են եղել, ինչպես նաև հանձնման-ընդունման արձանագրությունների արդյունքը պակաս է եղել ներկայացված պայմանագրով սահմանված գումարից:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 51-րդ կետի դրույթներով կետի դրույթներով, 19.05.2016թ. թիվ 5 որոշմամբ ոչ ավտոմատ տարբերակով ծանուցել է Մասնակցին՝ առաջարելով շտկել որակավորման փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները, որից հետո Մասնակից կողմից 20.05.2016թ. ժամը 21:45-ին էլ. փոստի միջոցով համակարգողին ուղարկվել է հանձնման-ընդունման արձանագրություններ, սակայն վերոհիշյալ փաստաթղթերը և անընթեռնելի էին և նշված գումարները (հանրագումարը) կրկին պակաս էր ներկայացված պայմանագրով սահմանված գումարից, ուստի գնահատող հանձնաժողովը 23.05.2016թ. թիվ 6 որոշմամբ մերժել է Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի հայտը և դադարեցրել հետագա մասնակցությունը գնման գործընթացին:

Պատվիրատու 3-ը, պատշաճ ծանուցված լինելով Կենտրոնում 28.06.2016թ. ժամը 16:30-ին տեղի ունեցած ՍՑ-ԳԲԽ-48/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

6. <u>«Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի</u> (այսուհետ նաև՝ Պատվիրատու 4) <u>ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ը 12.02.2016թ. թիվ 30-16 գրությամբ հայտնել է, որ «14հ/դ-ՇՀԱՊՁԲ-15/2-16/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 9-րդ, 41-րդ և 55-րդ չափաբաժինների մասով հաղթող է ճանաչվել Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը:

Վերջինիս հետ 14.01.2016թ. կնքվել է «14հ/դ-ՇՀԱՊՁԲ-15/2-16/1-1» պայմանագիրը: Սակայն Մասնակցի կողմից չի մատակարարվել անհրաժեշտ սննդամթերքը:

Մասնակցին տեղյակ է պահվել, որ սննդամթերքը չմատակարարվելու դեպքում, համաձայն պայմանագրի 3-րդ կետի 3.1.7.1 ենթակետի «բ» պարբերության՝ պայմանագիրը կլուծարվի, սակայն Մասնակցի կողմից սննդամթերք այդպես էլ չի մատակարարվել:

Պատվիրատու 4-ը, պատշաճ ծանուցված լինելով Կենտրոնում 28.06.2016թ. ժամը 16:30-ին տեղի ունեցած ՍՑ-ԳԲԽ-48/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը հանդիսանում է անպատշաճ մատակարար, որի պատճառով տեսողության խանգարումներ ունեցող երեխաները համապատասխան ժամանակահատվածում չեն ստացել անհրաժեշտ սննդամթերքը, հատկապես կարագը, որը հանդիսանում է երեխաների սննդակարգի կարևորագույն բաղադրատարրը, ուստի Մասնակցին անհրաժեշտ է ներառել Ցուցակում:

7. «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի» (այսուհետ նաև՝ Պատվիրատու 5) ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր 10.02.2016թ. թիվ 16-02-062 գրությամբ հայտնել է, որ 30.12.2015թ. Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի հետ կնքվել է սննդամթերքի մատակարարման «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՄՍԿՀ-16/1-3» պայմանագիր:

08.02.2016թ. պայմանագրի 2.3 կետին համապատասխան՝ տրվել է պատվեր, որը չի մատակարարվել պայմանագրի 3.4.12 կետով սահմանված ժամկետում: Կրթահամալիրի գնումների համակարգողը բացասական եզրակացության օրինակելի ձևը ուղարկել է պատասխանատու ստորաբաժանման անդամներին և հայտը կազմած պատասխանատու ստորաբաժանման անդամը կազմել է բացասական եզրակացություն, որի մասին Մասնակիցը տեղեկացվել է էլեկտրոնային եղանակով:

11.02.2016թ. Պատվիրատու 5-ի կողմից «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՄՍԿՀ-16/1-3» պայմանագիրը լուծվել է՝ հիմք ընդունելով պայմանագրի 3.1.7 կետը և 3.1.7.1 կետրի «բ»

ենթակետում նշված ժամկետը: Լուծման մասին գրությամբ տեղեկացվել է Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը:

Պատվիրատու 5-ը, պատշաճ ծանուցված լինելով Կենտրոնում 28.06.2016թ. ժամը 16:30-ին տեղի ունեցած ՍՑ-ԳԲԽ-48/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը և պնդել 10.02.2016թ. թիվ 16-02-062 գրությամբ հայտնած դիրքորոշումը:

8. <u>Աբովյանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու 6) ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Աբովյանի քաղաքապետարանը 18.02.2016թ. թիվ Ե-349 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատու 6-ի ենթակայության մանկապարտեզների 2016թ. կարիքների համար «ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով սննդամթերք ձեռք բերելու նպատակով գնման ընթացակարգի 3, 4, 6-11, 13, 15-19, 21, 22, 24-28, 31, 36, 38, 40, 41, 44, 52-56, 59-65 չափաբաժիններով հաղթող է ճանաչվել Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը, սակայն սահմանված ժամկետներում չի ներկայացել և պայմանագիր չի կնքել:

Պատվիրատու 6-ը, պատշաճ ծանուցված լինելով Կենտրոնում 28.06.2016թ. ժամը 16:30-ին տեղի ունեցած ՍՑ-ԳԲԽ-48/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը և պնդել է Ա/Ձ Էդուարդ Առուստամյանին Ցուցակում ներառելու անհրաժեշտությունը:

9. <u>«Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության հ. 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև Պատվիրատու 7) ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության հ. 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ը 17.02.2016թ. թիվ ՀԳՀ 22/16 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատու 7-ի կարիքների համար անհրաժեշտ սննդամթերքի ձեռբերման նպատակով «ՀԳՀ-

ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի հետ 30.12.2015թ. կնքվել է պայմանագիր ընթացակարգի 10 չափաբաժինների մասով:

Համաձայն կնքված պայմանագրի՝ պատվիրատուն մատակարարին էլեկտրոնային ձևաչափով պատվեր է ուղարկում՝ նշելով մատակարարման ժամկետը: Սակայն, սահմանված ժամկետում ապրանքի մատակարարում չի իրականացվել և տվյալ խախտումը մատակարարի կողմից դարձել է շարունակական:

Հիմք ընդունելով 30.12.2015թ. Պատվիրատու 7-ի և Մասնակցի միջև կնքված պայմանագրի 3.1.1 և 3.1.7 կետերը և անպատասխանատու վերաբերմունքը մանկական կառույցի նկատմամբ՝ Պատվիրատու 6-ը որոշում է ընդունել միակողմանի լուծել պայմանագիրը:

Պատվիրատու 7-ը, պատշաճ ծանուցված լինելով Կենտրոնում 28.06.2016թ. ժամը 16:30-ին տեղի ունեցած ՍՑ-ԳԲԽ-48/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը և պնդել է Ա/Ձ Էդուարդ Առուստամյանին Ցուցակում ներառելու անհրաժեշտությունը:

10. <u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Նորքի տուն-ինտերատ» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու 8) ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Նորքի Տուն-Ինտերնատ» ՊՈԱԿ-ը 18.04.2016թ. թիվ 129 գրությամբ հայտնել է, որ 07.04.2016թ. հայտարարվել է «ՆՏԻ-ՇՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը, որի շրջանակներում Մասնակցի վերաբերյալ հարցում է կատարվել ՀՀ ֆինանսների նախարարություն, որին ի պատասխան՝ ստացվել է եզրակացություն, համաձայն որի՝ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Պատվիրատու 8-ը, պատշաճ ծանուցված լինելով Կենտրոնում 28.06.2016թ. ժամը 16:30-ին տեղի ունեցած ՍՑ-ԳԲԽ-48/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի

վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը և պնդել 18.04.2016թ. թիվ 129 գրությամբ ներկայացրած դիրքորոշումը:

11. **<u>ԳԲԽ-48/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 30.09.2016թ. եզրակացությունը և առաջարկել ՀՀ ֆինանսների նախարարության 30.01.2015թ. թիվ 1/73-1/759203-15, 04.12.2015թ. թիվ 1/73-1/38341-15, 13.01.2016թ. թիվ 1/73-1/373-16, 19.02.2016թ. թիվ 1/73-3/6054-16, 19.02.2016թ. թիվ 1/73-1/6022-16, 04.03.2016թ. թիվ 1/73-3/8391-16, 09.03.2016թ. թիվ 1/73-3/8588-16, 19.04.2016թ. թիվ 1/73-3/12359-16, 16.05.2016թ. թիվ 1/73-3/14195-16, 26.05.2016թ. թիվ 1/73-1/15069-16, 02.06.2016թ. թիվ 1/73-1/15617-16 գրություններով ներկայացված «Էդուարդ Առուստամյան Ավետիսի» Ա/Ձ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երեք տարի ժամկետով:

12. **<u>ՍՑ-ԳԲԽ-48/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարության 30.01.2015թ. թիվ 1/73-1/759203-15, 04.12.2015թ. թիվ 1/73-1/38341-15, 13.01.2016թ. թիվ 1/73-1/373-16, 19.02.2016թ. թիվ 1/73-3/6054-16, 19.02.2016թ. թիվ 1/73-1/6022-16, 04.03.2016թ. թիվ 1/73-3/8391-16, 09.03.2016թ. թիվ 1/73-3/8588-16, 19.04.2016թ. թիվ 1/73-3/12359-16, 16.05.2016թ. թիվ 1/73-3/14195-16, 26.05.2016թ. թիվ 1/73-1/15069-16, 02.06.2016թ. թիվ 1/73-1/15617-16 գրություններով ներկայացված Ա/Ձ Էդուարդ Առուստամյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. *«Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՄԻԱՄ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով ընթացակարգ*

• «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի կողմից «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմեկրպված «ՄԻԱՄ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 1) մասնակցելու նպատակով ի թիվ այլ մասնակիցների հայտ է ներկայացրել Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը:

• Ընթացակարգ 1-ի գանահատող հանձնաժողովի 01.12.2014թ. որոշմամբ Ընթացակարգ 1-ի թիվ 2, 4, 9, 19, 27, 32, 40, 44, 51, 65 և 72-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը, որի մասին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Մասնակցին ծանուցել է 05.12.2014թ. ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

• Մասնակցի կողմից Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովին 12.12.2014թ. ներկայացվել է ստորագրված և կնքված պայմանագրերն՝ առանց պայմանագրի ապահովման՝ տուժանքի մասին համաձայնագրի:

2. *ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՖՆ ՇՀԱՊՁԲ 15/2-20/15» ծածկագրով ընթացակարգ*

• ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՖՆ ՇՀԱՊՁԲ-15/2-20/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 2) մասնակցելու նպատակով Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը ***13.10.2015թ.*** հայտ է ներկայացրել:

• Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը Ընթացակարգ 1-ին մասնակցելու նպատակով հայտի N 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

• Պատվիրատու 2-ը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 15.10.2015թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի վերաբերյալ:

• Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 2-ին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն ***515 506 ՀՀ դրամի*** չափով:

• Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովը 10.11.2015թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ որոշել է Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի հայտը մերժել:

• Կենտրոնը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին ուղղված 06.09.2016թ. թիվ 01/04.1/3351-16 գրությամբ տեղեկացրել է, որ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը Կենտրոնին հայտնել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն, քանի որ 15.10.2015թ. կատարվել է 2014թ. 4-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվետվության ճշտում, որի արդյունքում առաջացել է շրջանառության հարկի գծով պարտավորություն և այն հետհաշվարկով անդրադարձել է մրցույթի հայտի ներկայացման օրվա վրա՝ առաջացնելով պարտավորություն այդ օրվա դրությամբ: Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի կողմից այդ պարտավորությունները անմիջապես մարվել են: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը խնդրել է հայտնել՝ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի ***13.10.2015թ. դրությամբ*** (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցած 515 506 ՀՀ դրամ գումարի չափով հարկային պարտավորությունը ե՞րբ է առաջացել և ի՞նչի արդյունքում:

• Ի պատասխան Կենտրոնի 06.09.2016թ. թիվ 01/04.1/3351-16 գրության՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 15.09.2016թ. 1/6-1/27619-16 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի (ՀՎՀՀ 25358462) ***13.10.2015թ. դրությամբ*** 515,506 դրամ չափով հարկային պարտավորությունը ***առաջացել է 15.10.2015թ-ին***՝ էլեկտրոնային եղանակով

Նոր Նորքի ՀՏ ներկայացված շրջանառության հարկի 2014թ-ի IV եռամսյակի ճշգրտված հաշվարկից:

3. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/3» ծածկագրով ընթացակարգ

- Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 3) մասնակցելու նպատակով Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը 28.10.2015թ. հայտ է ներկայացրել:
- Ընթացակարգ 3-ի գնահատող հանձնաժողովի 06.11.2015թ. թիվ 4 որոշմամբ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը ճանաչվել է 10-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 23-րդ, 94-րդ, 99-րդ, 100-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:
- Պատվիրատու 3-ը, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված կարգով, առաջարկել է Մասնակցին սահմանված ժամկետում ներկայացնել պահանջվող փաստաթղթերը, սակայն վերջիններիս կողմից փաստաթղթերը չեն ներկայացվել և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.11.2015թ. թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգին՝ Ընկերությունների հետագա մասնակցությունը դադարեցվել է:

4. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/7-277» ծածկագրով ընթացակարգ

- Երևանի քաղաքապետարանի և Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի միջև 17.12.2015թ. կնքվել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/7-277» ծածկագրով սննդամթերքի (այսուհետ նաև՝ Ապրանք) մատակարարման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):
- Պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ Վաճառողը (տվյալ դեպքում Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը) Ապրանքը մատակարարում է Գնորդին (Ստացողին) Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

- Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:
- Պայմանագրի 3.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա. մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ. Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի:

- Պայմանագրի N 2 հավելված՝ գնման ժամանակացույցի համաձայն՝ Մասնակիցը պարտավորվում է «Երևանի հ. 125 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին մատակարարել «Կանաչի» ապրանքը 2016թ. ընթացքում, ընդ որում միչև դեկտեմբեր ամսվա սահմանված վերջին աշխատանքային օրը: Ընդ որում մատակարարման կոնկրետ օրը որոշվում է Գնորդի կողմից նախնական (ոչ ուշ քան 3 աշխատանքային օր առաջ) պատվերի միջոցով՝ էլ. փոստով կամ հեռախոսազանգով:
- Համաձայն գործում առկա «125mankapartez@bk.ru» էլեկտրոնային փոստի արտատպման՝ 23.02.2016թ. և 26.02.2016թ. Ա/Ձ Էդուարդ Առուստամյանին ներկայացվել է «Կանաչի» մատակարարելու պատվերներ, որոնք սակայն Մասնակցի կողմից չեն կատարվել:
- Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետը, 15.03.2016 լուծել է Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի հետ 17.12.2015թ. կնքված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/7-277» ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագիրը, որի մասին գրությամբ տեղեկացվել է Մասնակիցը:

5. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/101» ծածկագրով ընթացակարգ

- Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/101» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 4) մասնակցելու նպատակով 10.05.2016թ. հայտ է ներկայացրել:

- Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 3.4 հավելվածով հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:
- Մասնակիցը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է ***78 435 162*** ՀՀ դրամ:
- Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 3-ին 13.05.2016թ. տրամադրված եզրակացության՝ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմել է ***45 900 000*** ՀՀ դրամ:
- Ընթացակարգ 4-ի գնահատող հանձնաժողովը 17.05.2016թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 4-րդ կետով մերժել է Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի հայտը:

6. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» ծածկագրով ընթացակարգ

- Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով 05.05.2016թ. հայտ է ներկայացրել:
- Ընթացակարգի հրավերով պահանջվել է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:
- Մասնակիցը հայտի N 3.1 հավելվածով՝ մասնագիտական փորձառության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան

նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է Երևանի քաղաքապետարանի հետ կնքած «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-15/38-4» պայմանագիրը, որի ընդհանուր արժեքը կազմել է 225,257,932 ՀՀ դրամ և պարտավորվում է հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

- Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.05.2016 թվականի թիվ 4 որոշմամբ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը ճանաչվել է Ընթացակարգի 15–րդ, 17-րդ, 29-րդ, 49-րդ, 53-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:
- Մասնակցի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-15/38-4» պայմանագրի պատճենը և հանձնման-ընդունման արձանագրություններ, որոնց ընդհանուր գումարը պակաս էր նշված պայմանագրով սահմանված գնից (225 257 937 ՀՀ դրամ):
- Մասնակիցը 18.05.2016 Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացրել է իր կողմից ներկայացված հայտի թիվ 3.1 հավելվածով ներկայացված «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորող փաստաթղթերը, որոնք Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են թերի և ոչ ընթեռնելի, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ա/Ձ Էդուարդ Առուստամյանին տեղեկացրել է, որպեսզի վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնի վերոհիշյալ փաստաթղթերի պատճենները ընթեռնելի տարբերակով:
- Մասնակցի կողմից 19.05.2016 թվականին ներկայացվել են որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր, որոնք Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են ոչ ամբողջական և անընթեռնելի, ինչպես նաև հանձնման–ընդունման արձանագրությունների հանրագումարը պակաս է եղել ներկայացված պայմանագրով սահմանված գումարից:
- Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել Մասնակցին շտկել անհամապատասխանությունները:
- Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 23.05.2016 թվականի ժամը 17:00-ի թիվ 6 արձանագրության 5-րդ կետով կայացված որոշմամբ մերժել է Ա/Ձ Էդուարդ

Առուստամյանի հայտը և դադարեցրել հետագա մասնակցությունը գնման գործընթացին՝ պատճառաբանելով, որ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի կողմից 20.05.2016թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրություններում նշված գումարները (հանրագումարը) պակաս են ներկայացված պայմանագրով սահմանված գումարից: Մասնակցի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չի ներկայացվել Պայմանագիրը սահմանված ժամկետում պատշաճ կատարելու վերաբերյալ կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը, ինչը հնարավորություն կտար Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնահատելու Պայմանագրի պատշաճ կատարման փաստը:

7. «Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «14ՀԴ-ՇՀԱՊՁԲ-15/2-16/1-1» ծածկագրով ընթացակարգ

- «Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի և Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի միջև 14.01.2016թ. կնքվել է «14ՀԴ-ՇՀԱՊՁԲ-15/2-16/1-1» սննդամթերքի մատակարարման պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր 1):
- Պայմանագիր 1-ի 2.1 կետի համաձայն՝ Վաճառողն մատակարարում է Գնորդին (Ստացողին) Պայմանագրի N 2 գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:
- Պայմանագիր 1-ի 3.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիր 1-ը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիր 1-ը:
- Պայմանագիր 1-ի 3.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից Պայմանագիր 1-ը խախտելն էական է համարվում, եթե՝

ա. մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ. ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

- Համաձայն գործում առկա «specialschool114@yandex.com» էկելտրոնային փոստի արտատպման 01.02.2016թ., 04.02.2016թ. և 09.02.2016թ. Ա/Ձ Էդուարդ Առուստամյանին էլեկտրոնային եղանակով ներկայացվել է սննդամթերք մատակարարելու պատվեր, որը սակայն Մասնակցի կողմից չի կատարվել և Պայմանագիր 1-ով նախատեսված Ապրանքը չի մատակարարվել:
- Պատվիրատուն 09.02.2016թ. լուծել է Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի միջև 14.01.2016թ. կնքված «14ՀԴ-ՇՀԱՊՁԲ-15/2-16/1-1» սննդամթերքի մատակարարման պայմանագիրը, որի մասին գրությամբ տեղեկացվել է Մասնակիցը:

8. «Երևանի Մխիթար Սեբաստացի կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՄՍԿՀ-16/1-3» ծածկագրով ընթացակարգ

- «Երևանի Մխիթար Սեբաստացի կրթահամալիր» ՊՈԱԿ-ի և Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի միջև 30.12.2015թ. կնքվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՄՍԿՀ-16/1-3» ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր 2):
- Պայմանագիր 2-ի 2.1 կետի համաձայն՝ Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին (Ստացողին) Պայմանագիր 2-ի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:
- Պայմանագրի 2.3 կետի համաձայն՝ Գնորդը պարվերները ուղարկում է էլեկտրոնային եղանակով:
- Պայմանագիր 2-ի 3.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:
- Պայմանագիր 2-ի 3.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից Պայմանագիր 2-ը խախտելն էական է համարվում, եթե՝

ա. մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետներում.

բ. ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի:

- Պայմանագիր 2-ի 3.1.9 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի ամսեկան մեկ անգամ տալ պատվեր ցանկացած օր մինչև ժամը 15:00:
- Պայմանագիր 2-ի 3.4.12 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է մատակարարումն իրականացնել ըստ 2.2 կետի ուղարկված պատվերի՝ մինչև հաջորդ օրվա ժամը 10:00, բացառությամբ Հացի, որը մատակարարվում է յուրաքանչյուր աշխատանքային օր՝ մինչև ժամը 8:30, նախորդող օրը տրված պատվերի հիման վրա:
- Պատվիրատուն 08.02.2016թ. էլեկտրոնային եղանակով Ա/Ձ Էդուարդ Առուստամյանին ներկայացրել է Ապրանք մատակարարելու պատվեր, սակայն Մասնակցի կողմից կատարվել է թերի մատակարարում, որի վերաբերյալ Պատվիրատուն 09.02.2016թ. էլեկտրոնային եղանակով ծանուցել է Մասնակցին:
- 11.02.2016թ. Պատվիրատու 5-ը ծանուցել է Ա/Ձ Էդուարդ Առուստամյանին «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՄՍԿՀ-16/1-3» ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագիրը լուծելու վերաբերյալ:

9. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության հ. 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՀԳՀ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով ընթացակարգ

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության հ. 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի և Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի միջև 30.12.2015թ. կնքվել է «ՀԳՀ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր 3):
- Պայմանագիր 3-ի 2.1 կետի համաձայն՝ Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին (Ստացողին) Պայմանագիր 3-ի N 2 հավելվածով սահմանված ծավալներով և ժամկետներում:
- Պայմանագիր 3-ի N 2 հավելվածով սահմանված է, որ Վաճառողը պարտավոր է Գնորդի կողմից գնման հայտը ստանալուց հետո, գնման հայտով նախատեսված քանակներով և ժամկետներում մատակարարել (ապրանքների մատակարարման

ժամկետները Գնորդի կողմից ներկայացված հայտով չի կարող պակաս լինել երեք օրացույցային օրից):

- Պայմանագիր 3-ի 3.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիր 3-ը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիր 3-ը:

- Պայմանագիր 3-ի 3.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե

ա. մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ. ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի:

- Պատվիրատու 7-ը 18.01.2016թ. էլեկտրոնային եղանակով Ա/Ձ Էդուարդ Առուստամյանին ներկայացրել է սննդամթերքի գնման թիվ 1 հայտը, որով պահանջել է մատակարարել սննդամթերք (մակարոն, կաղամբ, երշիկ եթած, կարագ, բուսական յուղ, շաքարավազ) սահմանելով մատակարարման ժամկետ՝ 21.01.2016թ.:

- Պատվիրատու 7-ի պատասխանատու ստորաբաժանման (այսուհետ նաև՝ Պատասխանատու ստորաբաժանում) կողմից 21.01.2016թ. կազմվել է թիվ 1 արձանագրությունը, համաձայն որի Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի կողմից 21.01.2016թ. սննդամթերքի մատակարարում չի իրականացվել: Պատասխանատու ստորաբաժանումը նշված արձանագրությամբ որոշեց կրկնել էլեկտրոնային պատվերը, քանի որ մատակարարը հեռախոսազանգերին չի պատասխանում:

- Պատվիրատու 7-ը 25.01.2016թ. էլեկտրոնային եղանակով Ա/Ձ Էդուարդ Առուստամյանին որպես պատվերի կրկնություն, ներկայացրել է սննդամթերքի գնման թիվ 2 հայտ, որով պահանջվել է մատակարարել սննդամթերքի գնման թիվ 1 հայտով նախատեսված սննդամթերքը, մատակարարման ժամկետ սահմանելով 25.01.2016թ.:

- Պատասխանատու ստորաբաժանման 25.01.2016թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ 25.01.2016թ. սննդամթերքի մատակարարում չի իրականցվել:

- Պատասխանատու ստորաբաժանումը որոշել է 27.01.2016թ. կրկնել էլեկտրոնային պատվերը, քանի որ մատակարարը հավաստել է, որ կիրականացնի ուշացված մատակարարումը:

- Պատվիրատու 7-ը 27.01.2016թ., որպես պատվերի կրկնություն, Ա/Ձ Էդուարդ Առուստամյանին էլեկտրոնային եղանակով ներկայացրել է սննդամթերքի գնման թիվ 3 հայտը, որով պահանջել է մատակարարել սննդամթերքի գնման թիվ 1 հայտում նշված սննդամթերքը, մատակարարման ժամկետ սահմանելով 29.01.2016թ.:
- Պատասխանատու ստորաբաժանման 29.01.2016թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ Մասնակցի կողմից 29.01.2016թ. մատակարարում չի իրականացվել:
- Պատասխանատու ստորաբաժանումը որոշել է 29.01.2016թ. կրկնել էլեկտրոնային պատվերը, քանի որ մատակարարը հավաստել է, որ կիրականացնի ուշացած մատակարարում:
- Պատվիրատու 7-ը 29.01.2016թ., որպես պատվերի կրկնություն, էլեկտրոնային եղանակով Ա/Ձ Էդուարդ Առուստամյանին ներկայացրել է սննդամթերքի գնման թիվ 4 հայտը, պահանջելով ներկայացնել գնման թիվ 1 հայտով նախատեսված սննդամթերքը, որպես մատակարարման ամսաթիվ սահմանելով 01.02.2016թ.:
- Պատասխանատու ստորաբաժանման 01.02.2016թ. թիվ 4 արձանագրության համաձայն, Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի կողմից 01.02.2016թ. մատակարարումը իրականացվել է ոչ ամբողջությամբ, մասնավորապես, չի մատակարարվել «կարագ» ապրանքատեսակը:
- Պատվիրատու 7-ը 04.02.2016թ. էլեկտրոնային եղանակով Ա/Ձ Էդուարդ Առուստամյանին ներկայացրել է սննդամթերի գնման թիվ 5 հայտը՝ պահանջելով մինչև 08.02.2016թ. մատակարարել «թթվասեր» և «կաղամբ» ապրանքները:
- Պատասխանատու ստորաբաժանման 08.02.2016թ. թիվ 5 արձանագրության համաձայն՝ 08.02.2016թ. Մասնակցի կողմից սննդամթերք չի մատակարարվել, ընդ որում «կարագ» ապրանքատեսակի պատվերը փետրվարի 1-ից մինչև փետրվարի 8-ն ընկած ժամանակահատվածը էլեկտրոնային եղանակով կրկնվել է երեք անգամ, իսկ հեռախոսազանգով ամեն օր:
- Պատվիրատու 7-ը 10.02.2016թ. Ա/Ձ Էդուարդ Առուստամյանին էլեկտրոնային եղանակով ներկայացրել է սննդամթերք մատակարարելու թիվ 8, 9 և 10 հայտերը՝ սահմանելով սննդամթերքի մատակարարման ամսաթիվ 15.02.2016թ., սակայն

համաձայն Պատասխանատու ստորաբաժանման 16.02.2016թ. թիվ 6 արձանագրության՝ Մասնակցի կողմից սննդամթերքի մատակարարում չի իրականացվել:

- Պատվիրատու 7-ը 18.02.2016թ. թիվ ՀԳՀ-28/16 գրությամբ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանին ծանուցել է «ՀԳՀ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագիրը լուծելու վերաբերյալ:

10. «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՆՏԻ-ՇՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով ընթացակարգի

- «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՏԻ-ՇՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը 07.04.2016թ. հայտ է ներկայացրել:

- Պատվիրատու 8-ը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 08.04.2015թ. կատարված հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի վերաբերյալ:

- Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն **256 644** ՀՀ դրամի չափով:

- Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.04.2016թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի հայտը մերժվել է:

11. Աբովյանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15» ծածկագրով ընթացակարգ

- Աբովյանի քաղաքապետարանի կողմից Աբովյանի քաղաքապետարանի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով նպատակով կազմակերպված «ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15» ծածկագրով ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի 29.01.2016թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3.2 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը ճանաչվել է Ընթացակարգի թիվ 3, 4, 6-11, 13, 15-19, 21, 22, 24-28, 31, 32, 36, 38, 40, 41, 44, 52-56, 59-65 չափաբաժինների մասով ընտրած մասնակից:

- Պատվիրատու 6-ը 12.02.2016թ. էլեկտրոնային եղանակով ծանուցել է Ա/Ձ Էդուարդ Առուստամյանին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և «ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15-2/2», «ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15-3/2», «ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15-4/2», «ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15-5/2», «ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15-6/2», «ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15-7/2», «ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15-9/2», «ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15-10/2», «ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15-12/2» ծածկագրերով պայմանագրերի նախագծերը և հայտնել, որ նշված պայմանագրերը կնքվելու են նշված ծանուցումը Մասնակցի կողմից ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում մինչև 16.02.2016թ. ներառյալ, համապատասխանաբար տուժանքի ձևով պայմանագրի ապահովում ներկայացնելու դեպքում:
- Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը սահմանված ժամկետում չի ներկայացել և չի կնքել պայմանագրերը:

13. <u>Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Խորհուրդն, ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-48/16 բողոքը, գտնում է, որ այն ենթակա է բավարարման՝ հետևյալ հիմնավորմամբ.

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՖՆ ՇՀԱՊՁԲ 15/2-20/15» ծածկագրով և «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՆՏԻ-ՇՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով ընթացակարգեր

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ եթե Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցմանն ի պատասխան տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը ***13.10.2015թ.*** մասնակցության հայտ է ներկայացրել ֆինանսների նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների

համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՖՆ ՇՀԱՊՁԲ-15/2-20/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 2-ին տրամադրված եզրակացության համաձայն՝ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն ***515 506 ՀՀ դրամի*** չափով:

Կենտրոնը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին ուղղված 06.09.2016թ. թիվ 01/04.1/3351-16 գրությամբ տեղեկացրել է, որ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը Կենտրոնին հայտնել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն, քանի որ 15.10.2015թ. կատարվել է 2014թ. 4-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվետվության ճշտում, որի արդյունքում առաջացել է շրջանառության հարկի գծով պարտավորություն և այն հետհաշվարկով անդրադարձել է մրցույթի հայտի ներկայացման օրվա վրա՝ առաջացնելով պարտավորություն այդ օրվա դրությամբ: Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի կողմից այդ պարտավորությունները անմիջապես մարվել են: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը խնդրել է հայտնել՝ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի ***13.10.2015թ. դրությամբ*** (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցած 515 506 ՀՀ դրամ գումարի չափով հարկային պարտավորությունը ե՞րբ է առաջացել և ի՞նչի արդյունքում:

Ի պատասխան Կենտրոնի 06.09.2016թ. թիվ 01/04.1/3351-16 գրության՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 15.09.2016թ. 1/6-1/27619-16 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի (ՀՎՀՀ 25358462) ***13.10.2015թ. դրությամբ*** 515,506 դրամ չափով հարկային պարտավորությունը առաջացել է ***15.10.2015թ-ին՝*** էլեկտրոնային եղանակով Նոր Նորքի ՀՏ ներկայացված շրջանառության հարկի 2014թ-ի IV եռամսյակի ճշգրտված հաշվարկից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ըստ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 15.09.2016թ. 1/6-1/27619-16 գրության՝ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի ***13.10.2015թ. դրությամբ*** 515,506 դրամ չափով հարկային պարտավորությունը

առաջացել է 15.10.2015թ-ին՝ էլեկտրոնային եղանակով Նոր Նորքի ՀՏ ներկայացված շրջանառության հարկի 2014թ-ի IV եռամսյակի ճշգրտված հաշվարկից (այսինքն հայտը ներկայացնելու օրից հետո), ուստի Մասնակիցը հայտը ներկայացնելու օրը, այն է 13.10.2015թ., չէր կարող կանխատեսել հարկային պարտավորություն առկայությունը, հետևաբար այս հիմքով առկա չէ նաև գնման գործընթացի շրջանակում Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի կողմից կեղծ տվյալի ներկայացում:

«Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՏԻ-ՇՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը ***07.04.2016թ.*** հայտ է ներկայացրել:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 8-ին տրամադրված եզրակացության համաձայն՝ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն **256 644** ՀՀ դրամի չափով:

Խորհուրդը գտնում է, որ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի կողմից «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՏԻ-ՇՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 07.04.2016թ. հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/101» ծածկագրով ընթացակարգ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը սահմանում է, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ եթե Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցմանն ի պատասխան տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից ***հայտը ներկայացվելուն նախորդող***՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/101» ծածկագրով ընթացակարգին (մասնակցելու նպատակով 10.05.2016թ. հայտ է ներկայացրել: Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 3.4 հավելվածով հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

Մասնակիցը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ սննդի փաթեթի համար, որի գինը կազմել է ***78 435 162*** ՀՀ դրամ: Սակայն համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 3-ին 13.05.2016թ. տրամադրված եզրակացության՝ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմել է ընդամենը ***45 900 000*** ՀՀ դրամ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համաձայն Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության՝ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը հայտով ներկայացրել է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից, մինչդեռ վերջինիսի հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը (45 900 000 ՀՀ դրամ) պակաս է եղել ներկայացրած գնային առաջարկից (78 435 162 ՀՀ դրամ), ուստի /Ձ Էդուարդ Առուստամյանի կողմից 10.05.2016թ. հայտի թիվ 3.4 հավելվածով ներկայացված հայտարարությունները հանդիսանում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

3. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/7-277» ծածկագրով, «Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «14ՀԴ-ՇՀԱՊՁԲ-15/2-16/1-1» ծածկագրով, Երևանի Մխիթար

Սեբաստացի կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՄՍԿՀ-16/1-3» ծածկագրով և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության հ. 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «2ԳՀ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով ընթացակարգեր

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ուսումնասիրելով վերոհիշյալ ընթացակարգերով ներկայացրած փաստաթղթերը՝ Խորհուրդն արձանագրում է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/7-277» ծածկագրով, «Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «14ՀԴ-ՇՀԱՊՁԲ-15/2-16/1-1» ծածկագրով, Երևանի Մխիթար Սեբաստացի կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՄՍԿՀ-16/1-3» ծածկագրով և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության հ. 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «2ԳՀ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով ընթացակարգերի շրջանակներում Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով սահմանված, պայմանագրով նախատեսված պարտավորության ***ավելի քան մեկ անգամ խախտում***, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը:

Միևնույն ժամանակ նշված ծածկագրերով չի ներկայացվել որևէ ապացույց՝ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի կողմից նախատեսված տուժանքը, հաշվարկված վնասը, տույժը կամ տուգանքը վերականգնվելու վերաբերյալ:

4. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/3» և «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» ծածկագրերով ընթացակարգեր

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ուսումնասիրելով վերոհիշյալ ընթացակարգերով ներկայացրած փաստաթղթերը՝ Խորհուրդն արձանագրում է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/3» և «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» ծածկագրերորվ ընթացակարգերի շրջանակներում Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը ավելի քան մեկ անգամ թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով սահմանված, գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Միևնույն ժամանակ նշված ծածկագրերով չի ներկայացվել որևէ ապացույց՝ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի կողմից նախատեսված տուժանքը վերականգնվելու վերաբերյալ:

5. Աբովյանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15», «Մարի Իզմիրլյանի անվան մանկապուն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՄԻԱՄ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրերով ընթացակարգեր

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում որպես ընտրված մասնակից մեկ անգամից ավելի հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուսումնասիրելով վերոհիշյալ ընթացակարգերով ներկայացրած փաստաթղթերը՝ Խորհուրդն արձանագրում է, որ՝

«Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՄԻԱՄ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով ընթացակարգով Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը ճանաչվել է 2-րդ, 4-րդ, 9-րդ, 19-րդ, 27-րդ, 32-րդ, 40-րդ, 44-րդ, 51-րդ, 65-րդ, 72-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից, Պատվիրատուն էլեկտրոնային եղանակով ծանուցել է Ա/Ձ Էդուարդ Առուստամյանին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրերի նախագծերը, որոնք, սակայն ստորագրված և կնքված ներկայացվել են մասնակցի կողմից՝ առանց ներկայացնելու Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պայմանագրի ապահովման:

Հետևաբար Մասնակիցը հրաժարվելով ներկայացնել պայմանագրի ապահովում՝ դրանով հրաժարվել է նաև նշված չափաբաժինների մասով պայմանագրեր կնքելուց:

Աբովյանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15» ծածկագրով ընթացակարգով Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը ճանաչվել է ընտրված մասնակից, Պատվիրատուն էլեկտրոնային եղանակով ծանուցել է Ա/Ձ Էդուարդ Առուստամյանին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և «ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15-2/2», «ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15-3/2», «ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15-4/2», «ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15-5/2», «ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15-6/2», «ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15-7/2», «ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15-9/2», «ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15-10/2», «ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15-12/2» ծածկագրերով պայմանագրերի նախագծերը և հայտնել, որ նշված պայմանագրերը կնքվելու են նշված ծանուցումը Մասնակցի կողմից ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում մինչև 16.02.2016թ. ներառյալ, համապատասխանաբար տուժանքի ձևով պայմանագրի ապահովում ներկայացնելու դեպքում: Սակայն Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը սահմանված ժամկետում չի ներկայացել և չի կնքել պայմանագրերը:

Ելնելով վերոգրյալից՝ Խորհուրդը գտնում է, որ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «գ» ենթակետով սահմանված, այն է՝ որպես ընտրված մասնակից մեկ անգամից ավելի հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Միևնույն ժամանակ նշված ծածկագրերով չի ներկայացվել որևէ ապացույց՝ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի կողմից նախատեսված տուժանքը վերականգնվելու վերաբերյալ:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **<u>հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում</u> գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ**:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Ա/Ձ Էդուարդ Առուստամյանին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***Մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Խորհուրդն արձանագրում է, որ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը:

Մասնավորապես, Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի կողմից թույլ են տրվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա», «բ» և «գ» «բ» ենթակետերով սահմանված խախտումներ և միևնույն ժամանակ առկա է առաջին խախտումը թույլ տալուց հետո Մասնակցի կողմից ներկայացված հայտ(եր):

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների

գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Կարգի 125-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է ***3 տարի ժամկետով***, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը կամ սույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված տուժանքը, հաշվարկված վնասը, տույժը կամ տուգանքը չեն վերականգնվել մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Խորհրդի՝ սույն որոշման կայացման օրվա դրությամբ Մասնակցի կողմից չեն վերականգնվել Կարգի 125-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված տուժանքը, հաշվարկված վնասը, տույժը կամ տուգանքը, ուստի Խորհուրդը գտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 30.01.2015թ. թիվ 1/73-1/759203-15, 04.12.2015թ. թիվ 1/73-1/38341-15, 13.01.2016թ. թիվ 1/73-1/373-16, 19.02.2016թ. թիվ 1/73-3/6054-16, 19.02.2016թ. թիվ 1/73-1/6022-16, 04.03.2016թ. թիվ 1/73-3/8391-16, 09.03.2016թ. թիվ 1/73-3/8588-16, 19.04.2016թ. թիվ 1/73-3/12359-16, 16.05.2016թ. թիվ 1/73-3/14195-16, 26.05.2016թ. թիվ 1/73-1/15069-16, 02.06.2016թ. թիվ 1/73-1/15617-16 գրություններով ներկայացված Ա/Ձ Էդուարդ Առուստամյանին (ՀՎՀՀ՝ 25358462) անհրաժեշտ է ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երեք տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 30.01.2015թ. թիվ 1/73-1/759203-15, 04.12.2015թ. թիվ 1/73-1/38341-15, 13.01.2016թ. թիվ 1/73-1/373-16, 19.02.2016թ. թիվ 1/73-3/6054-16, 19.02.2016թ. թիվ 1/73-1/6022-16, 04.03.2016թ. թիվ 1/73-3/8391-16, 09.03.2016թ. թիվ 1/73-3/8588-16, 19.04.2016թ. թիվ 1/73-3/12359-16, 16.05.2016թ. թիվ 1/73-3/14195-16, 26.05.2016թ. թիվ 1/73-1/15069-16, 02.06.2016թ. թիվ 1/73-1/15617-16 գրություններով ներկայացված Ա/Ձ Էդուարդ Առուստամյանին (ՀՎՀՀ՝ 25358462) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երեք տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Անդամներ՝ **Լեռնիկ Խաչատրյան**

Ռուզաննա Հովհաննիսյան